


Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Լավ համբերելու պարզևր

Երբ ես երիտասարդ էի, ծառայում էի Եկեղեցում որպես խորհրդական շրջանի մի իմաստուն նախագահի հետ: Նա շարունակ փորձում էր սովորեցնել ինձ: Հիշում եմ խորհուրդը, որը նա մի անգամ տվեց ինձ. «Երբ հանդիպում ես մեկին, այնպես վերաբերվիր նրա հետ, կարծես նա լուրջ փորձության մեջ է, և դու հիմնականում ճիշտ կլինես»: Այդ ժամանակ ես մտածեցի, թե նա հոռետես է: Այժմ, ավելի քան 50 տարի անց, ես կարողանում եմ տեսնել, թե որքան լավ էր նա հասկանում աշխարհը և կյանքը:

Մենք բոլորս էլ հանդիպում ենք փորձությունների, երբեմն էլ՝ դժվարին փորձությունների: Մենք գիտենք, որ Տերը թույլ է տալիս մեզ անցնել դժվարությունների միջով՝ հղկվելու և կատարելագործվելու համար, որպեսզի կարողանանք հավիտյան Նրա հետ լինել:

Լիբերթիի բանտում Տերն ուսուցանեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին այն մասին, որ փորձությունների մեջ լավ համբերելը կօգնի նրան արժանի դառնալ հավերժական կյանքին:

«Որդիս, խաղաղություն քո հոգուն. քո ձայնորդություններն ու քո չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ:

Եվ հետո, եթե դու լավ համբերես, Աստված քեզ վեր կբարձրացնի. դու կհաղթես քո բոլոր թշնամիներին» (ՎեՌու 121.7-8):

Կյանքի ընթացքում այնքան շատ հարվածներ ենք ստանում, որ կարող է թվալ, թե դժվար է լավ համբերել: Այդպես կարող է թվալ հացահատիկի բերքին սպասող ընտանիքին, երբ անձրև չկա: Նրանք կարող են հարցնել. «Որքա՞ն կարող ենք մենք դիմանալ»: Այդպես կարող է թվալ պատանուն, ով պատրաստվում է դիմակայել անպարկեշտության և գայթակղությունների ահագնացող հեղեղին: Այդպես կարող է թվալ երիտասարդ տղամարդուն, ով դժվարանում է կրթություն ստանալ կամ անհրաժեշտ փորձ ձեռք բերել աշխատանքի համար, որպեսզի հոգա իր կնոջ և ընտանիքի կարիքները: Այդպես կարող է թվալ այն մարդուն, ով չի կարողանում աշխատանք գտնել կամ կորցնում է հերթական աշխատանքը, մինչ բիզնեսները փակում են իրենց դռները: Այդպես կարող է թվալ նրանց, ում առողջությունը և ֆիզիկական ուժն աստիճանաբար թուլանում է, ինչը կարող է պատահել կյանքի վաղ շրջանում կամ կյանքի վերջում՝ իրենց կամ իրենց սիրելիների հետ:

Մասկայն սիրող Աստվածը մեզ նման փորձություններ չի տալիս պարզապես տեսնելու համար, արդյո՞ք մենք կարող ենք դիմանալ դրանց, այլ տալիս է, որպեսզի տեսնի, արդյո՞ք մենք կարող ենք լավ համբերել և այդպիսով դառնալ փայլուն:

Առաջին Նախագահությունն ուսուցանեց Փարլի Պ. Պրատին (1807-57), երբ նա նոր էր կանչվել որպես

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ. «Դուք կանչված եք մի գործի, որը պահանջում է ձեր ողջ ուշադրությունը. . . դառնալու փայլուն նետ: . . . Դուք պետք է համբերեք, կատարելով շատ ծանր, տքնազան աշխատանքներ և շատ զրկանքներ տանեք, որպեսզի դառնաք կատարելապես փայլուն: . . . Ձեր Երկնային Հայրն է պահանջում դա. սա Նրա արտն է. սա Նրա աշխատանքն է. և Նա . . . կուրախացնի ձեզ . . . և կքաջալերի»:¹

Եբրայեցի գրքում Պողոսը խոսում է լավ համբերելու պտղի մասին. «Ամեն խրատ հենց նոյն ժամանակին ուրախություն չէ երեւում, այլ տրտմություն. բայց յետոյ նորանով վարժուածներին արդար խաղաղութեան պտուղ է վճարում» (Եբրայեցի 12.11):

Մեր փորձություններն ու դժվարությունները մեզ հնարավորություն են տալիս սովորելու և աճելու, և դրանք կարող են փոխել նույնիսկ մեր էությունը: Եթե մենք կարողանանք դառնալ դեպի Փրկիչը ծայրահեղ իրավիճակներում, մեր հոգիները կարող են փայլել, մինչ մենք համբերում ենք:

Ուստի, առաջին բանը, որ պետք է հիշենք, միշտ աղոթելն է (տես Վեճ 10.5, Ալմա 34.19–29):

Երկրորդը՝ միշտ ձգտել պահել պատվիրանները, անկախ ընդդիմությունից, գայթակղությունից կամ մեր շուրջը գտնվող խառնաշփոթից (տես Մոսիա 4.30):

Երրորդ կարևորագույն բանը, որ պետք է անենք, Տիրոջը ծառայելն է (տես Վեճ 4.2, 20.31):

Տիրոջը ծառայելով, մենք սկսում ենք ճանաչել և սիրել Նրան: Եթե շարունակ աղոթենք և հավատարիմ ծառայենք, մենք կսկսենք տեսնել Փրկիչի ձեռքը և Մուրբ Հոգու ազդեցությունը մեր կյանքում: Մեզանից շատերն են որոշ ժամանակ նման ծառայություն մատուցել և զգացել այդ ընկերակցությունը: Եթե դուք խորհեք այդ ժամանակների մասին, կհիշեք, որ ձեր մեզ փոփոխություններ են տեղի ունեցել: Չարիք գործելու գայթակղությունը կարծես նվազել էր: Բարիք գործելու ցանկությունը մեծացել էր: Նրանք, ովքեր լավ էին ճանաչում ձեզ և սիրում էին ձեզ, միգուցե ասել են. «Դուք ավելի բարի ու համբերատար եք դարձել: Դուք կարծես նույն մարդը չեք»:

Դուք նույն մարդը չեք: Դուք փոխվել էիք Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ, քանի որ ապավինել էիք Նրան ձեր փորձության պահին:

Ես խոստանում եմ ձեզ, որ Տերը ձեզ օգնության կհասնի ձեր փորձության ժամին, եթե փնտրեք ու

ծառայեք Նրան, և ձեր հոգին ժամանակի ընթացքում փայլուն կդառնա: Ես կոչ եմ անում ձեզ ձեր վստահությունը դնել Նրա վրա ձեր բոլոր ձախորդությունների ժամանակ:

Ես գիտեմ, որ Հայր Աստվածն ապրում է, և Նա լսում ու պատասխանում է մեր յուրաքանչյուր աղոթքին: Ես գիտեմ, որ Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, վճարել է մեր բոլոր մեղքերի գինը, և Նա ուզում է, որ մենք գանք Իր մոտ: Ես գիտեմ, որ Հայրը և Որդին հսկում են մեզ և ուղի են պատրաստել մեզ համար, որ լավ համբերենք և կրկին տուն գանք:

ՀՂՈՒՄ

1. *Autobiography of Parley P. Pratt*, ed. Parley P. Pratt Jr. (1979), 120.

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Մենք բոլորս էլ հանդիպում ենք մարտահրավերների, որոնք փորձում են մեր հավատը և համբերելու ունակությունը: Խորհեք նրանց կարիքների և դժվարությունների մասին, ում ուսուցանում եք: Նախքան այցելելը, դուք կարող եք աղոթել առաջնորդության համար, որպեսզի իմանաք, թե ինչպես լավագույնս օգնեք նրանց լավ համբերել: Դուք կարող եք քննարկել Նախագահ Այրիկի Նշած թե՛ սկզբունքները, թե՛ սուրբ գրությունները, ներառյալ՝ աղոթքը, ծառայությունը և պատվիրանները պահելը: Դուք կարող եք նաև կիսվել անձնական փորձառություններով այն մասին, թե ինչ ուղիներով եք օրհնվել, որոնք օգնել են ձեզ լավ համբերել:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Երբ իմ ընկերը մահացավ Սամանտա Լինթոն

Երբ սկսեցիք հաճախել ավագ դպրոց, իմ ընկերը հիվանդացավ ուղեղի անևրիզմով ու հաջորդ օրը մահացավ: Չնայած ես Եկեղեցու անդամ էի, այնուամենայնիվ, ինձ համար դժվար էր: Ողջ կյանքում ինձ ուսուցանել էին, որ ես կարող էի դառնալ դեպի Երկնային Հայրը և Փրկիչը ցանկացած բանի համար, սակայն ես երբեք նախկինում ստիպված չէի եղել նման բանի միջոցով անցնել:

Ժամեր շարունակ ես լաց էի լինում, փորձելով մի բան գտնել, որևէ բան, որն ինձ խաղաղություն

կտար: Նրա մահանալուց հետո հաջորդ երեկոյան
ես ձեռքս վերցրի երգարանը: Մինչ թերթում էի էջե-
րը, ես բացեցի «Մնա ինձ հետ այս գիշեր» օրհներգը
(Abide with Me; Tis Eventide) (*Hymns*, no. 165): Երրորդ
տունը գրավեց իմ ուշադրությունը.

*Մնա ինձ հետ այս իրիկուն,
Որ միայնակ չլինեմ այս գիշեր,
Եթե չեմ կարող խոսել քեզ հետ,
Կամ գտնել քո մեջ իմ լույսը:
Խավարն աշխարհի, որից ես վախենում եմ,
Տիրել է այս տունը:
Օ՛ Փրկիչ, մնա այս գիշեր ինձ հետ,
Մնա այս իրիկուն:*

Այս տունը լցրեց ինձ մեծ խաղաղությամբ: Այդ
պահին ես հասկացա, որ Փրկիչը ոչ միայն կմնար
ինձ հետ այդ գիշեր, այլև Նա հաստատ գիտեր,
թե ես ինչ էի զգում: Ես գիտեմ, որ օրհներգի միջո-
ցով զգացած սերը ոչ միայն օգնեց ինձ անցկացնել
այդ գիշերը, այլև օգնել է ինձ անցնելու զանազան
փորձությունների միջով, որոնց ժամանակ ես համ-
բերել եմ:

Չեղի՛նակն ապրում է Յուսայում (ԱՄՆ):

**Դուք կարող եք ներբեռնել “Abide with Me;
’Tis Eventide” lds.org/go/7176-ում:**



Որպեսզի նրանք կարողանան մեկ լինել

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ոգեշնչում փնտրեք, թե ինչով կարող եք կիսվել: Սփոփող Միության նպատակի ըմբռումն ինչպե՞ս է պատրաստում Աստծո ղրուստրերին հավերժական կյանքի օրհնությունների համար:

Հավատ, ընտանիք, սփոփանք

«Հիսուսը կատարյալ միասնության հասավ Հոր հետ՝ ենթարկելով Իրեն Հոր կամքին՝ թե՛ մարմնով, թե՛ հոգով», - ուսուցանել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը:

«... Անշուշտ, մենք չենք կարող լինել մեկ՝ Աստծո և Քրիստոսի հետ, մինչև Նրանց կամքն ու շահը չդարձնենք մեր մեծագույն ցանկությունը: Նման հնազանդության չեն հասնում մի օրում, բայց եթե կամենում ենք, Մուրբ Հոգու միջոցով Տերը կուսուցանի մեզ, մինչև որ ժամանակի ընթացքում հստակ կարող է ասվել, որ Նա մեզանում է, ինչպես Հայրը Նրանում»¹

Լինդա Ք. Բրոքերը՝ Սփոփող Միության Գերագույն Նախագահը, ուսուցանել է, թե ինչպես աշխատել այս միության ուղությանմբ. «Կապելով և պահելով մեր ուխտերը, մենք ցույց ենք տալիս, որ ցանկանում ենք դառնալ Փրկիչի նման: Մենք պետք է ձգտենք մեր վարքով

առավելագույնս արտահայտել սիրելի օրհներգի խոսքերը՝ «Կգնամ, ուր կուզես *Դու, Տեր*: . . . Կասեմ, ինչ կուզես *Դու, Տեր*: . . . Կլինեմ, ինչ կուզես *Դու, Տեր*»:²

Երեց Քրիստոֆերսոնը նաև հիշեցրել է մեզ, որ «մինչ մենք օր օրի և շաբաթ առ շաբաթ ջանում ենք հետևել Քրիստոսի ցույց տված ուղուն, մեր հոգին հաստատում է դրա նշանակությունը, ներքուստ մղվող պայքարը նվազում է և փորձությունները դադարում են անհանգստացնել մեզ»:³

Նեյլ Ֆ. Մերիտթը՝ Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահության Երկրորդ Խորհրդականը, վկայություն է բերում մեր կամքը Աստծո կամքի հետ համաձայնեցնելու ջանքերից բխող օրհնությունների մասին. «Ես պայքարել եմ, որպեսզի հեռացնեմ ինձանից ամեն բան *իմ* ձևով անելու մարդկային ցանկությունը, երբ, ի վերջո, գիտակցել եմ, որ իմ ճանապարհները շատ թերի են, սահմանափակ և զիջում են Հիսուս Քրիստոսի ուղուն:

[Մեր Երկնային Հոր] ուղին այն արահետն է, որը տանում է դեպի երջանկություն այս կյանքում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում»:⁴ Եկեք խոնարհաբար ձգտենք մեկ դառնալ՝ մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Լրացուցիչ սուրբ գրություններ և տեղեկություններ

Հովհաննես 17.20–21, Եփեսացիս 4.13, Վարդապետություն և Ուխտեր 38.27, reliefsociety.lds.org

ՀՂՈՒՄՆԵՐ

1. D. Todd Christofferson, "That They May Be One in Us," *Liahona*, Nov. 2002, 72.
2. Լինդա Կ. Բրոքերն, «Ուխտերը պահելու գործությունը, ուրախությունը և սերը», *Լիսինուս*, նոյ. 2013, 111:
3. D. Todd Christofferson, "That They May Be One in Us," 71.
4. Նեյլ Ֆ. Մերիտթ, «Ենթարկենք մեր սրտերը Աստծուն», *Լիսինուս*, նոյ. 2015, 32:

Խորհեք այս մասին
Ինչպե՞ս է Աստծո կամքի կատարումն օգնում մեզ ավելի սմանվել Նրան: